# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև առանձին միջազգային պայմանագրերի փոփոխության և ուժը կորցրած ճանաչելու մասին**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 115-րդ հոդվածով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

«Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի և հավաքագրումների) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության մեջ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները՝

12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«12. Յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվում են հետևյալ չափերով՝

Հայաստանի Հանրապետություն՝ 1,220 տոկոս,

Բելառուսի Հանրապետություն՝ 4,860 տոկոս.

Ղազախստանի Հանրապետություն՝ 6,955 տոկոս.

Ղրղզստանի Հանրապետություն՝ 1,900 տոկոս,

Ռուսաստանի Դաշնություն՝ 85,065 տոկոս:»,

40-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անդամ պետության լիազոր մարմինը յուրաքանչյուր օր, ոչ ուշ, քան տեղական ժամանակով ընթացիկ օրվա ժամը 16:00-ը (Հայաստանի Հանրապետության համար՝ Երևան քաղաքի ժամանակով, Բելառուսի Հանրապետության համար՝ Մինսկ քաղաքի ժամանակով,

Ղազախստանի Հանրապետության համար՝ Նուր-Սուլթան քաղաքի ժամանակով, Ղրղզստանի Հանրապետության համար՝ Բիշքեկ քաղաքի ժամանակով, Ռուսաստանի Դաշնության համար՝ Մոսկվա քաղաքի ժամանակով) մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններ է ուղարկում հետևյալ տեղեկությունները՝ հաշվետու օրվա դրությամբ.»,

53-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«53. Անդամ պետությունների պետական ֆինանսական հսկողության բարձրագույն մարմինները համատեղ վերահսկիչ միջոցառումների շրջանակներում յուրաքանչյուր տարի ստուգում են անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից սույն արձանագրության դրույթների պահպանումը:»:

Հոդված 2

Ուժը կորցրած ճանաչել «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի 8-րդ հոդվածի 1-ին կետը:

Հոդված 3

Անդամ պետությունների կողմից սույն Արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է 2020 թվականի հունվարի 1-ից, իսկ այն անդամ պետության համար, որի օրենսդրությամբ նախատեսված չէ միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառման հնարավորություն, սույն Արձանագրությունը կիրառվում է այդ անդամ պետության կողմից սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման օրվանից, սակայն 2020 թվականի հունվարի 1-ից ոչ շուտ:

Սույն Արձանագրության դրույթները տարածվում են 2020 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից, սակայն 2020 թվականի հունվարի 1-ից ոչ շուտ:

2020 թվականի հունվարի 1-ից դադարում է՝

«Ղրղզստանի Հանրապետության՝ ««Եվրասիական տնտեսական միության մասին»

2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրի առանձին դրույթների կիրառման մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի արձանագրության գործողությունը,

«Ղրղզստանի Հանրապետության՝ ««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու վերաբերյալ» 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ստորագրված պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» 2018 թվականի մայիսի 14-ի արձանագրության գործողությունը:

Կատարված է Երևան քաղաքում, 2019 թվականի հոկտեմբերի 1-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Արձանագրության ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կողմից** | **Բելառուսի Հանրապետության կողմից** | **Ղազախստանի Հանրապետության կողմից** | **Ղրղզստանի Հանրապետության կողմից** | **Ռուսաստանի Դաշնության կողմից** |

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև առանձին միջազգային պայմանագրերի փոփոխության և ուժը կորցրած ճանաչելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն